Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-885[3]-16.07.2024-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զբաղվածության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-152-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին)» բառերը փոխարինել «Միասնական սոցիալական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 9-րդ, 13-րդ կետերում, 6-րդ, 9-րդ, 16-րդ հոդվածներում, 18-րդ հոդվածի 4-րդ մասում, 19-րդ հոդվածում, 20-րդ հոդվածի 12-14-րդ և 16-րդ մասերում, 21-րդ, 22-րդ, 23-րդ հոդվածներում, 24-րդ հոդվածի 4-րդ մասում «լիազորված մարմինը» բառերն իր հոլովաձևերով փոխարինել «Ծառայությունը» բառով՝ համապատասխան հոլովաձևերով, իսկ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «գործատուի լիազորած մարմին» բառերը փոխարինել «գործատուի կողմից Ծառայություն» բառով:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «մարմնի» բառը փոխարինել «պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին)» բառերով, իսկ «Միասնական սոցիալական ծառայության» բառերը փոխարինել «Ծառայության» բառով:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 1-ին կետից հանել «ուսումնասիրություն,» բառը.

2. 2-րդ, 3-րդ, 8-12-րդ և 18-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած.

3. 5-րդ կետից հանել «և իրականացնում» բառերը.

4. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) ստեղծում և տիրապետում է տեղեկատվական շտեմարան՝ աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և փոխանակման ապահովման նպատակով.».

5. 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17) առնվազն ամիսը մեկ անգամ առցանց հրապարակում է նոր ստեղծվող և թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվություն:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11.1-ին հոդվածով՝

«**Հոդված 11.1 Ծառայության լիազորությունները**

1. Ծառայությունը՝

1) իրականացնում է աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի ուսումնասիրություն, վերլուծություն, ազդեցության գնահատում և կանխատեսում.

2) իրականացնում է աշխատանք փնտրող անձի հաշվառում, հաշվառումից հանում, գործազուրկի կարգավիճակի տրամադրում, դրա կասեցում, վերականգնում և դադարեցում.

3) իրականացնում է աշխատանք փնտրող անձի զբաղվածության կարիքների գնահատում, կազմում է զբաղվածության ապահովման անհատական ծրագիր և կնքում զբաղվածության ապահովման անհատական ծրագրի իրականացման մասին պայմանագիր.

4) իրականացնում է անձի՝ մասնագիտության գիտակցված ընտրությանն ու կարիերայի արդյունավետ պլանավորմանն ուղղված ծառայությունների ապահովում մրցունակ մարդկային կապիտալի ձևավորման նպատակով.

5) իրականացնում է աշխատանքի տեղավորման միջնորդություն աշխատանք փնտրողի և գործատուի միջև, աշխատանք փնտրողին տրամադրում խորհրդատվություն և ուղեգրում գործատուի մոտ.

6) իրականացնում է զբաղվածության պետական ծրագրեր.

7) կազմակերպում է աշխատանքի տոնավաճառներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

8) համագործակցում է աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների հետ.

9) հաշվառում և հաշվառումից հանում է համագործակցող աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությանը.

10) վարում է էլեկտրոնային պաշտոնական կայքէջը և շահագործում է տեղեկատվական շտեմարանը.

11) առնվազն ամիսը մեկ անգամ առցանց հրապարակում է նոր ստեղծվող և թափուր աշխատատեղերի, աշխատաշուկայի վիճակի մասին տեղեկատվություն.

12) տրամադրում է տեղեկատվություն և մասնագիտական խորհրդատվություն գործատուներին՝ զբաղվածության բնագավառի ծառայությունների, ինչպես նաև աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ.

13) կազմակերպում է աշխատանքային միգրացիային վերաբերող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում արտագնա աշխատանքների համար աշխատանքային միգրանտների հավաքագրման, վերապատրաստման և օտարերկրյա պետությունում աշխատելու գործընթացը.

14) ստորագրված հուշագրերի շրջանակներում մասնակցում է զբաղվածության ծրագրերի և միջոցառումների իրականացմանը.

15) լիազորված մարմին առաջարկություններ է ներկայացնում զբաղվածության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ, մասնակցում է զբաղվածության ծրագրերի մշակման աշխատանքներին.

16) մասնակցում է նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների կառավարման խորհուրդների աշխատանքներին՝ որպես խորհրդի անդամ.

17) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 7. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ի մասում «Լիազորված մարմինը զբաղվածության պետական քաղաքականության մշակման և իրականացման շրջանակներում համագործակցում է» բառերը փոխարինել «Զբաղվածության պետական քաղաքականության մշակման և իրականացման շրջանակներում՝ լիազորված մարմինը և Ծառայությունը համագործակցում են» բառերով:

Հոդված 8. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և նշված մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ կետով՝

«7) ընդգրկվելու զբաղվածության պետական ծրագրերում և միջոցառումներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում, ուղղությամբ և կարգով:»:

Հոդված 9. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ձևավորում և» բառերը փոխարինել «ստեղծում է և Ծառայությունը» բառերով.

2) 2-րդ մասում «կայքէջում» բառը փոխարինել «և Ծառայության կայքէջերում» բառերով:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: